Botschaft
der Bundesrepublik Deutschland
Eriwan

Այցելություն ընտանիքին կամ ընկերներին

ԿԱՐԵՎՈՐ. Լիարժեք լրացված հարցաթերթիկները կարող եք ներկայացնել նախատեսած ուղևորությանը նախորդող վեց ամիսների ընթացքում:

Շենգենյան վիզայի դիմումի մշակման տևողությունը փաստաթղթերի հանձնումից մինչև անձնագրի վերադարձը կազմում է հիմնականում առնվազն 15 օրացուցային օր և կարող է ձգվել մինչև 45 օր: Խնդրում ենք դիմումը ներկայացնել ճամփորդության մեկնարկից առնվազն 45 օր առաջ:

ՌԴ քաղաքացիների դիմումների մշակման և վիզայի տրամադրման վերաբերյալ հավելյալ տեղեկություններ կարող եք քաղել դեսպանության կայքից:

Եթե Դուք պետք է մեկնեք անհապաղ կամ դիմումը հանձնելու օրվան հաջորդող երկու շաբաթների ընթացքում, խնդրում ենք ստուգել արդյո՞ք հնարավոր է հետաձգել մեկնումը: Առհասարակ ոչ դեսպանությունը, ոչ սպասարկող ընկերությունը (TLS) չեն կարող արագացնել ընթացակարգը:

<u>Խնդրում ենք նկատի ունենալ հետևյալը.</u>

Ոչ գերմաներեն կամ անգլերեն բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացնել սովորական (ոչ նոտարական) թարգմանությամբ:

Visakodex-ի համաձայն Հայաստանում Գերմանիայի դեսպանությունն իրավասու է ընդունելու միայն այն դիմումները, որոնք վերաբերում են որպես հիմնական երկիր Գերմանիա, Բելգիա, Լյուքսեմբուրգ կամ Շվեդիա ճամփորդություններին:

Սխալ փաստաթղթեր կամ ոչ ճիշտ տվյալներ ներկայացնելը մեծ հավանականությամբ հանգեցնում է դիմումի մերժման կամ անգամ Գերմանիա կամ այլ շենգենյան պետություն մուտք գործելու արգելքի:

Ոչ լիարժեք փաստաթղթեր ներկայացնելը նույնպես կարող է հանգեցնել մերժման:

Գերմանիայի դեսպանություններն իրենց իրավունք են վերապահում դիմումի մշակման ընթացքում անհրաժեշտության դեպքում պահանջելու լրացուցիչ փաստաթղթեր:

Չպահանջված, սակայն էլեկտրոնային փոստով կամ կոնտակտային ձևաչափով դեսպանությանն ուղարկված փաստաթղթերը չեն կցվում Ձեր դիմումին:

Դիմելու ընթացակարգի վերաբերյալ հավելյալ տեղեկություններ կարող եք քաղել մեր կայքից.
www.eriwan.diplo.de

Ստուգաթերթ՝ դիմումը ներկայացնելու համար
(Այցելություն ընտանիքին կամ ընկերներին)

Այս ստուգաթերթը ծառայում է անհրաժեշտ փաստաթղթերը հավաքելուն. առանձին կետերին վերաբերող տեղեկություններ կարող եք քաղել դեսպանության կայքից:

Խնդրում ենք փաստաթղթերը դասավորել հետևյալ հերթականությամբ.

			Ենթակա է լրացման TLS-ի կողմից
1	**Լրացված դիմումաթերթիկ**	Առցանց դիմումի ձևը կարող եք գտնել այս հղումով. https://videx.diplo.de. Խնդրում ենք լրացնել ուշադիր և լիարժեք: Լրացված դիմումաթերթիկը ներբեռնեք որպես PDF-նիշք: Տպեք այն, նշեք ամսաթիվը և ստորագրեք: Ցուցում. Անչափահասի դիմումի տակ պետք է լինեն երկու ծնողների ստորագրությունները: (Ազգանունը՝ ընթեռնելի տպատառերով, կամ ստորագրությունը)	❑
		Ստորագրված հայտարարություն՝ համաձայն ԳԴՀ «Կացության մասին օրենքի» 54-րդ հոդվածի 2-րդ պարբերության 8-րդ կետի և 53-րդ հոդվածի (Սա դիմումաթերթիկի վերջին էջն է):	❑
2	**1 լուսանկար**	1 նոր բիոմետրիկ անձնագրի լուսանկար	❑
3	**Բժշկական ճամփորդական ապահովագրություն շենգենյան պետությունների համար**	Վավերական ճամփորդական ապահովագրություն, որն առնվազն 30.000 եվրո ծածկույթով ապահովագրի Ձեր կացությունը շենգենյան ողջ գոտում: Բազմակի մուտքի, մեկամյա կամ բազմամյա վիզայի համար դիմելիս բավարար է ներկայացնել միայն առաջին ճամփորդության համար վավերական ճամփորդական ապահովագրություն:	❑
4	**Անձնագիր** Բնօրինակ + տվյալների էջի 1 պատճենը	Վավերական ստորագրված ճամփորդական անձնագիր (տրված վերջին 10 տարում), որն ունենա առնվազն երկու դատարկ էջ և նախատեսված վերադարձից հետո առնվազն 3 ամսվա վավերականություն	❑
		Անձնագրի այն էջերի պատճենները, որտեղ զետեղված են անձնական տվյալները	❑
		Անձնագրի այն էջերի պատճենները, որտեղ զետեղված են նախկինում ստացած շենգենյան վիզաները, նաև մուտքի և ելքի համապատասխան կնիքները	❑
		ՀՀ քաղաքացի չհանդիսացող անձինք պետք է ներկայացնեն Հայաստանում բնակության վայրի մասին տեղեկանք	❑
5	**Լրացուցիչ փաստաթղթեր 18 տարին չլրացած անձանց դիմումի դեպքում**	Ծննդյան վկայականի պատճենը	❑
		Եթե ծնողները կամ ծնողներից մեկը չեն կարող անձամբ ներկայանալ դիմումը հանձնելիս, ԿԱՄ երբ անչափահասի հետ ճամփորդելու է խնամակալության իրավունքով օժտված ծնողներից մեկը, ապա անհրաժեշտ է ներկայացնել ծնողների կամ բացակայող ծնողի համաձայնությունը՝ ձևակերպված և հաստատված հայկական նոտարի կողմից կամ ծնողներից մեկի՝ Գերմանիայի Bürgerbüro-ի կողմից հաստատված համաձայնությունը	❑

		Ծնողների/խնամակալների ճամփորդական անձնագրերի առաջին էջի, ինչպես նաև վավերական վիզայի պատճենները	❑
	Հատուկ դեպքեր	Եթե ծնողներից/խնամակալներից մեկը մահացել է. ➔ Մահվան վկայականի պատճենը	❑
		Եթե տրված է խնամքի միանձնյա իրավունք. ➔ Իրավասու դատարանի վճռի օրինակը	❑
6	**Տեղեկանք ֆինանսների կամ ապացույց՝ նախատեսված ճամփորդության համար բավարար միջոցների վերաբերյալ**	Անհատական բանկային քաղվածքներ՝ վերջին երեք ամիսների դրամական շարժով (մասնավորապես՝ կանոնավոր ամսական եկամուտներով, որոնք պետք է ընդգծել գունանշիչով)	❑
		Հարկային տեղեկանքներ աշխատավարձի կամ ինքնազբաղ գործունեությունից ստացած եկամուտների/շրջանառության վերաբերյալ, նաև կարող եք ներկայացնել լրացուցիչ հաշիվներ, օրինակ, խնայողական հաշիվներ, նախատեսած ողջ կացությունը ֆինանսավորելու Ձեր հնարավորությունները վկայելու նպատակով: Եթե Ձեր եկամուտը ծագում է գյուղատնտեսությունից կամ վարձակալությունից, անհրաժեշտ է ներկայացնել սեփականության վկայականներ:	❑
		Հաստատված հրավերի (պարտավորագիր) բնօրինակը և պատճենը. Հրավերը պետք է ձևակերպված լինի ոչ ավելի վաղ, քան վեց ամիս առաջ: Այլընտրանքային. Ձեր հովանավորը ֆորմալ պարտավորագիր կարող է ստանալ Բելգիայում/Լյուքսեմբուրգում: Այլընտրանքային. կարող եք ներկայացնել շվեդական միգրացիոն մարմնի (Migrationsverket) կողմից տրամադրված հրավեր, որը ներառում է Ձեր հովանավորի բանկային քաղվածքները և վերջին երեք աշխատավարձերի ծանուցումները	❑
		պարտավորություն ստանձնած անձի ԵՄ անձնագրի կամ կացության թույտվության պատճենը	❑
7	**Ապացույցներ Հայաստան վերադառնալու պատրաստակամության**	Եթե վարձու աշխատող եք. աշխատանքային վկայական՝ բնօրինակ ստորագրությամբ, ամսական աշխատավարձի նշմամբ և անհրաժեշտ ժամանակահատվածում աշխատանքից բացակայելու թույլտվությամբ	❑
		Ինքնազբաղության դեպքում՝ անհատ ձեռներեցի կամ ՍՊԸ գրանցման վկայական	❑
		Եթե ուսանող եք. բնօրինակ ստորագրությամբ վկայական դպրոցից/համալսարանից, որը կհավաստի, որ Դուք ճամփորդության համար հայցված ժամանակահատվածում ազատված եք դասախոսություններից	❑
		Թոշակառուների պարագայում, . հողամասերի, բնակարանների, տների	❑

		Անչափահաս դիմումատուների պարագայում, եթե դիմումները միասին չեն ներկայացվում, ներկայացվում են ծնողների բոլոր վերոնշյալ վկայականները:	❑
		Առաջին անգամ դիմելիս, կամ եթե վերջին երեք տարում չեք այցելել շենգենյան գոտու որևէ երկիր. - Ամուսնու/կնոջ անձնագրի բնօրինակը, ամուսնության վկայականը (կամ ամուսնալուծության վկայականը, մահվան վկայականը) և դրանց պատճենները - Անչափահաս երեխաների անձնագրերի, ծննդյան վկայականների բնօրինակը և դրանց պատճենը - Եթե երեխաները կամ ծնողները գտնվում են արտերկրում (օրինակ՝ Ռուսաստանում), անհրաժեշտ է ներկայացնել վերջիններիս գրանցման վկայականները կամ կացության թույլտվությունը	❑
8	**Փաստաթղթեր, որոնք հիմնավորում են ճամփորդության նպատակը**	Առանց պարտավորագրի հրավեր՝ ամսաթվի, հրավիրողի/հյուրընկալի անուն-ազգանվան, հասցեի նշումով և ստորագրությամբ (ձևակերպված առավելագույնը 3 ամիս առաջ)	❑
		Հրավիրողի ճամփորդական անձնագրի կամ կացության իրավունքի պատճենը	❑
		Մոտ ազգականության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել հավաստող փաստաթուղթ, օրինակ՝ ծննդյան վկայականի պատճենը	❑

Խնդրում ենք նկատի ունենալ, որ դեսպանությունը, առանց կանխավ Ձեզ հետ քննարկելու, և որքանով դա իրավական առումով թույլատրելի և անհրաժեշտ է, կարող է վիզան տրամադրել ավելի կարճ վավերականության ժամկետով, քան հայցել եք: Դիմողի ճամփորդական անձնագիրը մնում է դեսպանությունում և դիմումի մշակման ընթացքում վերադարձման ենթակա չէ:

Ստուգաթերթը ստորագրում են սպասարկող ընկերությունը և դիմողը.

Դիմողը հանձնել է վերոնշյալ փաստաթղթերը: Ես ուշադրություն եմ հրավիրել այն հանգամանքին, որ դիմումը կարող է մերժվել, եթե պահանջված փաստաթղթերը լիարժեք ներկայացված չլինեն: Դիմողն, այնուամենայնիվ, որոշել է հանձնել իր դիմումը:

Ստորագրություն Վիզաների կենտրոնի աշխատակից	Ստորագրություն Դիմող/Օրինական խնամակալ
Վայր, ամսաթիվ.	